

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 56/11

Քաղ. Երևան

20 դեկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա. Ի. Ղարիբջանյան (քարտուղար) Ա. Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան իր 2011թ. դեկտեմբերի 20-ի նիստում (արձանագրություն N 8.2) քննարկեց «Հիմալայա Գլոբլ Հոլդինգզ Լթդ.» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից 2011թ. հոկտեմբերի 27-ին «GASEX» (հայտի համարը N 20100465) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը, համաձայն որի որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Հայտարկված «GASEX» ապրանքային նշանը մերժվել է, քանի որ այն ունի ձայնային նմանություն ավելի վաղ առաջնությամբ միջազգային գրանցում ունեցող բառային «GASEC» (Mepha GmbH, Dornacherstrasse 114, Postfach 445, CH-4147 Aesch BL (CH), IR 604699, 684555) ապրանքային նշաններին:

Բողոքում նշված է, որ ապրանքային նշանները գրաֆիկորեն տարբեր են, քանի որ դրանք տարբեր են իրենց կազմությամբ, ինչից էլ բխում է նշանների հնչյունային տարբերությունը: Հայտարկվող «GASEX» նշանն իրենից ներկայացնում է լատիներեն այբուբենի մեծատառերով կազմված, 5 տառից և 6 հնչյունից բաղկացած բառ, որը կարդացվում է «գասեքս»: Մինչդեռ

հակադրվածներն իրենցից ներկայացնում են մեկը լատիներեն, մյուսը՝ կիրիլիցայի այբուբենների մեծատառերով կազմված, 5 տառից և նույնքան հնչյունից բաղկացած նշաններ, որոնք կարդացվում են «գասեկ»: Առաջին հայացքից աննշան թվացող «x» և «c/к» տառերի տարբերությունը բավական մեծ դեր է խաղում նշանների տարբերակման ժամանակ, քանի որ դրա շնորհիվ բառերը ստանում են այլ հնչյունային երանգ՝ դրանով իսկ տարբերվելով միմյանցից, գասեքս - գասեկ: «GASEX» բառի դեպքում վերջին X (քս) տառը պահանջում է հստակ արտասանություն, մինչդեռ GASEC/FACEK բառերի դեպքում c/к (կ) հնչյունը ստանում է ավելի թույլ արտասանական երանգ:

Բողոքում նշված է նաև, որ երկու նշանների տակ առաջարկվող ապրանքները, չնայած որ հայտարկվում են նույն 5-րդ դասի համար, սակայն տարբեր նշանակություն և կիրառում ունեն, ինչը չափազանց կարևոր դեր է խաղում նշանների տարբերակման ժամանակ: Այստեղ հարկ է նշել, որ նույնիսկ, եթե նշանները հայտարկվում են «դեղագործական պատրաստուկներ» ապրանքների համար, այնուամենայնիվ դրանք ունեն հատուկ կիրառում, քանի որ յուրաքանչյուր դեղագործական արտադրանք ունի իր հատուկ նշանակությունը և ուղղված է կոնկրետ հիվանդության բուժման համար: Բողոքարկողը նշել է, որ հայտարկվող «GASEX» նշանով մակնշվող դեղորայքը նախատեսված է մարսողության հետ կապված խնդիրների բուժման համար, ինչպիսիք են մարսողության խանգարումը, գազերի հետևանքով փքվածությունը, ինչպես նաև օգնում են վերականգնել աղիքանցումային ժամանակահատվածը և նվազեցնում աղիներում գազի կուտակումը: Դեղամիջոցի ամենակարևոր հատկությունն այն է, որ այն հանդիսանում է այուրվեդիկ (Ayurvedic) դեղամիջոց (Ayurvedia բառը գալիս է «ayur» (կյանք) և «veda» (իմանալ) բառերից և նշանակում է «կյանքի գիտություն», այուրվեդիկ դեղամիջոցը դա ոչ տրադիցիոնալ դեղամիջոց է, որի մեջ օգտագործված են խոտաբույսեր և այլ բնական բուժիչ միջոցներ):

FACEK կամ GASEC դեղամիջոցները, որոնք հանդիսանում են բոլորին հայտնի օմեպրազոլ դեղամիջոցի տեսակ, համաձայն դրանց պաշտոնական կայքի տվյալների նախատեսված են ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցի, գաստրիտի բուժման համար, նվազեցնում են ստամոքսի թթվայնությունը, որի հետևանքով առաջանում են նման հիվանդություններ:

Բողոքարկողը համոզված է, որ վերոհիշյալ ապրանքային նշանները շփոթելը անհնար է և հարկ է համարել նշել, որ ապրանքային նշանը գրանցում է ստացել աշխարհի տարբեր երկրներում, որոնցից են Եվրամիության երկրները, Մոնղոլիան, Բուլղարիան, Բրունեյը, Նեպալը, Մյանմարը, Լիբերիան, Կոլումբիան, Վենեսուելան, Հարավային Աֆրիկան և Հնդկաստանը:

Բողոքարկողը, հիմք ընդունելով վերոհիշյալը, խնդրում է հաշվի առնել նշված փաստարկները և վերանայել կրկնական փորձաքննության որոշումը՝ գրանցելով «GASEX» (հայտի համար՝ N20100465) ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. հոկտեմբերի 27-ին «Հիմալայա Գլոբլ Հոլդինգ Լթդ.» ընկերության կողմից ներկայացվել է «GASEX» (հայտի համարը՝ N 20100465) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք, նշվեց նաև, որ նոյեմբերի 23-ի նիստում հիշյալ գործի քննարկումը հետաձգվել էր բողոքարկողի կողմից լրացուցիչ նյութեր ներկայացնելու ակնկալիքով, որոնք քննարկման ընթացքում չներկայացվեցին:

Կոլեգիայի անդամի կողմից համառոտ նշվեց մերժման հիմքերը և բողոքի բովանդակությունը, ներկայացվեց կոլեգիայի այն կարծիքը, որ նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Քննարկման արդյունքում, բողոքարկման խորհուրդը եկավ այն եզրակացության, որ բողոքում ներկայացված հիմնավորումները համոզիչ չեն, և իսկապես «GASEX» և «GASEC» ապրանքային նշանները, որոնց սպառման ոլորտները նույնն են, շփոթելու աստիճան նման են և չեն կարող գոյատևել:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Հիմալայա Գլոբլ Հոլդինգ Լթդ.» ընկերության բողոքը և «GASEX» (հայտի համարը N 20100465) բառային ապրանքային նշանի միջազգային գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան